դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ձորի թիվ 1-34 սահմանակետերով անցնում 5795 մ, հասնում ճանապարհի և ձորի հատման կետում գտնվող թիվ 35 սահմանակետին, որտեղից ճանապարհով թեքվում է դեպի հարավ և հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհը թիվ 36-47 սահմանակետերով անցնում է 1830 մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 48 սահմանակետին: Թիվ 48 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ճանապարհի թիվ 49-50 սահմանակետերով անցնում 385 մ, հասնում դաշտային ճանապարհների հատման խաչմերուկի թիվ 51 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ճանապարհի թիվ 52-53 սահմանակետերով անցնում 459 մ, հասնում ձորակի հետ միացման թիվ 54 սահմանակետին: Թիվ 54 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, ձորի թիվ 55-62 սահմանակետերով անցնում 978 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 63 սահմանակետին: Թիվ 63 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ձորակի թիվ 64-66 սահմանակետերով անցնում է 817 մ, հասնում թիվ 67 սահմանակետին: Թիվ 67 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, լանջերով, հատելով դաշտային ճանապարհը, թիվ 68-72 սահմանակետերով անցնում է 1088 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 73 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, ձորի թիվ 74-101 սահմանակետերով անցնում 3679 մ, հասնում թիվ 102 սահմանակետին: Թիվ 102 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, լանջերով, թիվ 103-106 սահմանակետերով անցնում 1053 մ, հասնում ձորակի եզրի թիվ 107 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ձորակի թիվ 108 սահմանակետով անցնում 1269 մ, հասնում ձորակի եզրի թիվ 109 սահմանակետին: Թիվ 109 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջով անցնում 832 մ, հասնում «Կիզիլկայա» կոչվող եռանկյունաչափական թիվ 110 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, այնուհետև հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհները, Ժայռերի եզրի թիվ 111-120 սահմանակետերով անցնում է 2777 մ, հասնում Ժայռի եզրին գտնվող Սևքար, Լուսաձոր և Եմոքավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 20961 մ է:

ՍԵՎՔԱՐ – ԵՆՈՔԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Է»

Սկսքար, Ենոքավան և Լուսաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Ժայռի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, լանջի թիվ 1-2 սահմանակետերով անցնում 868 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը ձորակով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 4-9 սահմանակետերով անցնում 1934 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 94 մ, հասնում բարձունքի գագաթին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը, թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, լանջի թիվ 12-15 սահմանակետերով անցնում 1283 մ, հասնում ձորակի եզրի գտնվող թիվ 16 սահմանակետին, որտեղից ձորակով թեքվում է դեպի հարավ-արևելք և ձորի թիվ 17-19 սահմանակետերով անցնելով 1385 մ, հասնում է գետի ափին գտնվող թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք ապա հարավ-արևմուտք, Խաչբուլաղ գետով, թիվ 21-33 սահմանակետերով անցնում 3396 մ, հասնում Սկսքար, Ենոքավան և Հաղարծին գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8960 մ է:

ՍԵՎՔԱՐ - ՀԱՂԱՐԾԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է»-«Ը»

Սկսքար, Հաղարծին և Ծաղկավան (Իջևանի շրջան) գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 1-2 սահմանակետով անցնում 529մ, հասնում է բարձունքի գագաթին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը պարբերաբար թեքվում է դեպի հարավ-արևմուտք և հարավ-արևելք, հատելով ջրհավաքները, լանջերով, թիվ 4-9 սահմանակետերով անցնում 1500մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին, որտեղ հատում է դաշտային ճանապարհը, թեքվում հարավ-արևմուտք, հարավ, ապա կրկին հարավ-արևմուտք, հատում ձորակներ, թիվ 11-14 սահմանակետերով անցնում 1360մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, ձորի թիվ 16-17

սահմանակետերով անցնում 1123մ, հասնում է ձորի և Խաչբուլաղ գետի հատման կետում գտնվող թիվ 18 սահմանակետին, որտեղից նշված գետով թեքվում է դեպի արևելք, գետի թիվ 19-22 սահմանակետերով անցնում 2293մ, հասնում է գետի ափին գտնվող Սևքար, Հաղարծին և Ենոքավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6806մ է:

ՍԵՎՔԱՐ - ԾԱՂԿԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ը»-«Թ»

Ձորի եզրին գտնվող Սևքար, Սարիգյուղ և Ծաղկավան (Իջևանի շրջան) գյուղական համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, այնուհետև հյուսիս, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 525մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատելով ձորը, լանջով, թիվ 4 սահմանակետով անցնում 2571մ, հասնում է թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով ձորակներ, անցնում լանջով, թիվ 6-7 սահմանակետերով անցնում 5161մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որտեղից դարձյալ թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 9-13 սահմանակետերով անցնում 4132մ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվելով դեպի հարավ-արևմուտք, ձորով, թիվ 15-34 սահմանակետերով անցնում է 3187մ, հասնում թիվ 35 սահմանակետին: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 36-42 սահմանակետերով անցնում 1167մ, հասնում է Աղբուղա գետի ափին գտնվող թիվ 43 սահմանակետին, որտեղից գետով թեքվում է հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 44-50 սահմանակետերով անցնում 1688մ, հասնում է թիվ 51 սահմանակետին: Թիվ 51 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 800մ, հասնում է թիվ 52 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 53-58 սահմանակետերով անցնում է 2024մ, հասնում թիվ 59 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 60-62 սահմանակետերով անցնում 934մ, հասնում է Սևքար, Ծաղկավան (Իջևանի շրջան) և Հաղարծին գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Թ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 22188մ է:

ՍԵՎՔԱՐ – ՍԱՐԻԳՅՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Թ»-«Ա»

Սևքար, Սարիգյուղ գյուղական համայնքների և Ադրբեջանի Հանրապետության տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 470 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք ապա հյարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի ոլորանների թիվ 5-38 սահմանակետերով անցնում 3623 մ, հասնում ճանապարհի և ձորի հատման տեղում գտնվող թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորի թիվ 41-43 սահմանակետերով անցնում 651 մ , հասնում ձոր եզրի թիվ 44 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք ապա հարավ-արևմուտք, ձորով, թիվ 45-53 սահմանակետերով անցնում 770 մ, հասնում ձորի և դաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 54 սահմանակետին: Թիվ 54 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, ճանապարհի թիվ 55-56 սահմանակետերով անցնում 576 մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 57 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևմուտք, հատում Աչաջուր-Սարիգյուղ միջհամայնքային ճանապարհը, անցնում 76 մ, հասնում թիվ 58 սահմանակետին: Թիվ 58 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 134 մ, հասնում թիվ 59 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում Սևքար-Սարիգյուղ միջհամայնքային ճանապարհը, թիվ 60 սահմանակետով անցնում 1061 մ, հասնում Սևքարի բնակավայրի հյուսիսային եզրագծի մոտ գտնվող թիվ 61 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, բնակավայրի եզրագծով անցնում 229 մ, հասնում բնակավայրի եզրագծի թիվ 62 սահմանակետին: Թիվ 62 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհները, թիվ 63-64 սահմանակետերով անցնում է 503 մ. հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 65 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 66-79 սահմանակետերով անցնում 1313 մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 80 սահմանակետին: Թիվ 80 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 139 մ, հասնում թիվ 81 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 82-88 սահմանակետերով անցնում 1246 մ, հասնում թիվ 89 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 90 սահմանակետով անցնում 227 մ, հասնում թիվ 91 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք և արևմուտք, թիվ 92 սահմանակետով

անցնում 184 մ, հասնում թիվ 93 սահմանակետին: Թիվ 93 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 247 մ հասնում թիվ 94 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, թիվ 95-96 սահմանակետերով անցնում 191 մ, հասնում թիվ 97 սահմանակետին, այստեղից թեքվում դեպի է հարավ-արևմուտք, թիվ 98-103 սահմանակետերով անցնում 1183 մ, հասնում թիվ 104 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, անցնում 32 մ, հասնում թիվ 105 սահմանակետին: Թիվ 105 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 247 մ, հասնում թիվ 106 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 115 մ, հասնում թիվ 107 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևմուտք, անցնում 273 մ, հասնում թիվ 108 սահմանակետին: Թիվ 108 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 299 մ, հասնում թիվ 109 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 163 մ, հասնում թիվ 110 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով ձորը, անտառի եզրագծով, թիվ 111-112 սահմանակետերով անցնում է 2335 մ, հասնում անտառիեզրի թիվ 113 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի արևմուտք, անցնում 265 մ, հասնում թիվ 114 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 281 մ, հասնում անտառեզրի թիվ 115 սահմանակետին: Թիվ 115 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 98 մ, հասնում թիվ 116 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, թիվ 117-118 սահմանակետերով անցնում 387 մ, հասնում թիվ 119 սահմանակետին, որտեղից կտրուկ թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 143 մ, հասնում թիվ 120 սահմանակետին: Թիվ 120 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 121 սահմանակետով անցնում 490 մ, հասնում 122 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս, անցնում 31 մ, հասնում թիվ 123 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 215 մ, հասնում թիվ 124 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հյուսիս-արևմուտք, անտառեզրի ոլորանների թիվ 125-130 սահմանակետերով անցնում 1160 մ, հասնում անտառեզրի թիվ 131 սահմանակետին: Թիվ 131 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատելով ձորը, թիվ 132-133 սահմանակետերով անցնում է 432 մ հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 134 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, ճանապարհի թիվ 135-136 սահմանակետերով անցնում 455 մ, հասնում է ճանապարհի եզրի թիվ 137 սահմանակետին, այստեղից էլ թեքվում է դեպի արևելք, անցնում 202 մ, հասնում Սևքար,

Սարիգյուղ և Ծաղկավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Թ»
հանգուցային սահմանակետին:

«Թ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 20447 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՎԱԶԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վազաշեն գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը արևմուտքից և հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահման (Ադրբեջանի Հանրապետության), արևելքից և հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Պառավաքար գյուղական համայնքին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Խաշթառակ և «Դ»-«Ա» հատվածով՝ Այգեհովիտ գյուղական համայնքներին:

ՎԱԶԱՇԵՆ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

ՎԱԶԱՇԵՆ – ՊԱՐԱՎԱՔԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Վազաշեն, Պառավաքար գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 614մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, այստեղից ճանապարհով թեքվում է դեպի հարավ, անցնում 642մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 387մ, հասնում «Օձքար» կոչվող եռանկյունաչափական սահմանակետից 15մ դեպի հյուսիս գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհներ, անտառի եզրով, թիվ 5-7 սահմանակետերով անցնում 890մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 8 սահմանակետին, ապա հատում է ճանապարհը, թեքվում դեպի հարավ, անտառի եզրով անցնում 57մ, հասնում թիվ 9 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհին զուգահեռ 10-13 սահմանակետերով անցնում 924մ, հասնում

թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի ոլորաններով թիվ 15-41 սահմանակետերով անցնում 7711մ, հասնում է թիվ 42 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, ապա կրկին հարավ-արևմուտք դաշտային ճանապարհից 15մ հեռավորության վրա, ճանապարհին զուգահեռ թիվ 43-50 սահմանակետերով անցնում 2650մ, հասնում թիվ 51 սահմանակետին: Թիվ 51 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհին զուգահեռ թիվ 52 սահմանակետով անցնում 564մ, հասնում ձորից 15մ հեռու գտնվող թիվ 53 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, ձորին զուգահեռ, թիվ 54-57 սահմանակետերով անցնում 775մ, հասնում ձորի և դաշտային ճանապարհի հատման տեղից 15մ հեռավորության վրա գտնվող թիվ 58 սահմանակետին, այնուհետև կտրուկ թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, ձորին զուգահեռ, թիվ 59-60 սահմանակետերով անցնելով 591մ, հասնում է Վազաշեն, Պառավաքար և Խաշթառակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15805մ է:

ՎԱԶԱՇԵՆ – ԽԱՇԹԱՐԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Վազաշեն, Խաշթառակ և Այգեհովիտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում բնական աղբյուրների մոտ, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, առվով անցնում 165մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվով, թիվ 2 սահմանակետով անցնում 217մ, հասնում թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 4 սահմանակետով անցնում 151մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, առվով, թիվ 6-7 սահմանակետերով անցնում 558մ, հասնում առվի եզրին գտնվող Վազաշեն, Խաշթառակ և Պառավաքար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1090մ է:

ՎԱԶԱՇԵՆ – ԱՅԳԵՂՈՎԻՏ ՍԱՐՍԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»

Վազաշեն, Այգեհովիտ գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ճանապարհի թիվ 1-2 սահմանակետերով անցնում 297մ, հասնում թիվ 3 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք հատում դաշտային և միջհամայնքային ճանապարհները, թիվ 4-13 սահմանակետերով անցնում 2403մ, հասնում է գետի ափին գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, գետով անցնում 3623մ, հասնում անտառի եզրի թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրով թիվ 16 սահմանակետով անցնում 2121մ, հասնում անտառի եզրի թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհներ, անտառի եզրի ոլորանների թիվ 18-27 սահմանակետերով անցնում 5682 մ, հասնում անտառի եզրի թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրով, թիվ 29 սահմանակետով անցնում 1588մ, հասնում բնական աղբյուրների մոտ գտնվող Վազաշեն, Այգեհովիտ և Խաշթառակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15713մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԱԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վարագավան գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիս-արևելյան մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ներքին Կարմիր աղբյուր և «Բ»-«Գ» հատվածով՝ Տավուշ գյուղական համայնքներին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Ծաղկավան (Տաուշի շրջան) գյուղական համայնքին, հարավից, արևմուտքից և հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ Պառավաքար գյուղական համայնքին:

ՎԱՐԱԳԱՎԱՆ – ՆԵՐՔԻՆ ԿԱՐՄԻՐ ԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Վարագավան, Պառավաքար և Ներքին Կարմիր աղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, դաշտային ճանապարհով անցնում 331մ, հասնում անտառի եզրին գտնվող Վարագավան, Ներքին Կարմիր աղբյուր և Տավուշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 331 մ է:

ՎԱՐԱԳԱՎԱՆ – ՏԱՎՈՒՇ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Վարագավան, Ներքին Կարմիր աղբյուր և Տավուշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրով անտառի եզրով անցնում 1030մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող Վարագավան, Տավուշ և Ծաղկավան (Տաուշի շրջան) գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1030 մ է:

ՎԱՐԱԳԱՎԱՆ – ԾԱՂԿԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Վարագավան, Ծաղկավան (Տաուշի շրջան) և Տավուշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, Հախուն գետի ոլորաններով անցնում 3521մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, այնտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, բլուրներով՝ թիվ 2 սահմանակետով անցնում 432մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 181մ, հասնում դաշտային ճանապարհների խաչմերուկում գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, թիվ 5 սահմանակետով անցնում 785մ, հասնում թիվ 6 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհ և ձորակ, անտառի եզրագծով, թիվ 7-8 սահմանակետերով անցնելով 2608մ, հասնում է բարձրունքի վրա գտնվող թիվ 9 սահմանակետին, ապա կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 502մ, հասնում անտառի եզրի թիվ 10 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անտառի եզրագծով անցնում 236մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ձորով, թիվ 12-37 սահմանակետերով անցնում 4457մ, հասնում թիվ 38 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, հետո կրկին հարավ-արևմուտք, ձորով, թիվ 39-47 սահմանակետերով անցնում 2831մ, հասնում ձորի եզրի թիվ 48 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, ուղիղ գծով անցնում 744մ, հասնում գետի ափին գտնվող Վարագավան, Պառավաքար և Ծաղկավան (Տաուշի շրջան) գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ» - «Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 16296մ է:

ՎԱՐԱԳԱՎԱՆ – ՊԱՌԱՎԱՔԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»

Վարագավան, Պառավաքար և Ներքին Կարմիր աղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, Հախուն գետի ձորի ոլորաններով, թիվ 1-27 սահմանակետերով անցնում 3366մ, հասնում է ձորի եզրի թիվ 28 սահմանակետին, այստեղից շարունակվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատում դաշտային և միջհամայնքային ճանապարհներ, առուներ, ձորակի թիվ 29-39 սահմանակետերով անցնում 1425մ, հասնում ջրբաժանի թիվ

40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ջրբաժանի 41-46 սահմանակետերով անցնում 1103մ, հասնում բարձրունքի վրա գտնվող թիվ 47 սահմանակետին, այստեղից կրկին թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհներ, թիվ 48-50 սահմանակետերով անցնում է 597մ, հասնում անտառի եզրի թիվ 51 սահմանակետին: Թիվ 51 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, անցնում 406մ, հասնում թիվ 52 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 53 սահմանակետով անցնում 529մ, հասնում «Օձաքար» եռանկյունաչափական կետի հետ համընկնող, թիվ 54 սահմանակետին: Թիվ 54 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհներ, անտառի եզրով, թիվ 55-57 սահմանակետերով անցնում 860մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 58 սահմանակետին, այնուհետև հատում է դաշտային ճանապարհը, թեքվում է դեպի հարավ, անցնում 67մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 59 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի թիվ 60-68 սահմանակետերով անցնում 1524մ, հասնում է ճանապարհի և ձորի հատման տեղում գտնվող թիվ 69 սահմանակետին: Թիվ 69 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհի ոլորաններով, շրջանցելով բարձրունքների գագաթները, թիվ 70-99 սահմանակետերով անցնում է 7159մ, հասնում դաշտային ճանապարհների խաչմերուկներում գտնվող թիվ 100 սահմանակետին: Թիվ 100 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, հետո կրկին հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով, թիվ 101-109 սահմանակետերով անցնում է 2834մ, հասնում թիվ 110 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևմուտք, դաշտային ճանապարհով անցնում 342մ, հասնում դաշտային ճանապարհի և ձորի հատման տեղում գտնվող թիվ 111 սահմանակետին: Թիվ 111 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, ձորի թիվ 112-115 սահմանակետերով անցնում է 732մ, հասնում ձորի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 116 սահմանակետին: Թիվ 116 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատելով դաշտային ճանապարհ, ձորով թիվ 117 սահմանակետով անցնում է 595մ, հասնում թիվ 118 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, հատում դաշտային ճանապարհ, առվով թիվ 119 սահմանակետով անցնում է 250մ, հասնում թիվ 120 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով, անցնում 400մ, հասնում թիվ 121

սահմանակետին: Թիվ 121 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, հատում դաշտային ճանապարհներ, թիվ 122 սահմանակետով անցնում 484մ, հասնում գետակի ափին գտնվող թիվ 123 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատում դաշտային ճանապարհներ, թիվ 124-127 սահմանակետերով, գետով անցնում 680մ, հասնում գետի ափին գտնվող Վարագավան, պառավաքար և Ծաղկավան (Տաուշի շրջան) գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 23355 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐ ԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերին Կարմիր աղբյուր գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ներքին Կարմիր աղբյուր գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Մոսեսգեղ և «Գ»-«Դ» հատվածով՝ Նորաշեն գյուղական համայնքներին, արևելքից, հարավից և արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Արծվաբերդ գյուղական համայնքին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Նավուր գյուղական, «Զ»-«Է» հատվածով՝ Բերդ քաղաքային և «Է»-«Ա» հատվածով՝ Տավուշ գյուղական համայնքներին:

ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐ ԱՂԲՅՈՒՐ - ՆԵՐՔԻՆ ԿԱՐՄԻՐ ԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Վերին Կարմիր աղբյուր, Ներքին Կարմիր աղբյուր և Տավուշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է բարձունքի վրա, սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 375մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, բարձունքով անցնում 315մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա կրկին թեքվում է հարավ-արևելք, անցնում 309մ, հասնում միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող, թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 60մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, ապա թեքվում է հարավ-արևելք, դաշտային ճանապարհով և թիվ 5-6 սահմանակետերով անցնում 844մ, հասնում է առվակի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին, այնուհետև այդ ճանապարհով և առվակով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 8 սահմանակետով անցնում 152մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում առվակը և խճուղին, թիվ 10 սահմանակետով անցնում 70 մ, հասնում է թիվ 11 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևելք, խճուղու եզրով անցնում 148մ, հասնում է թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, հողի կտրվածքի եզրով անցնում 190մ, հասնում թիվ 13 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 14 սահմանակետով անցնում 113մ, հասնում է թիվ 15

սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 60մ, հասնում է թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 260մ, հասնում թիվ 17 սահմանակետին, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, ապա այդ ճանապարհով թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 18 սահմանակետով անցնում 209մ, հասնում է Վերին Կարմիր աղբյուր, Ներքին Կարմիր աղբյուր և Մոսեսգեղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3104 մ է:

ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐ ԱՂԲՅՈՒՐ – ՄՈՍԵՍԳԵՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Վերին Կարմիր աղբյուր, Ներքին Կարմիր աղբյուր և Մոսեսգեղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-8 սահմանակետերով անցնում 892մ, հասնում է թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, լանջով, թիվ 10 սահմանակետով անցնում 470մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 12 սահմանակետով անցնում 384մ, հասնում է թիվ 13 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 264մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 182մ, հասնում թիվ 15 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, ջրբաժանով անցնում 346մ, հասնում է թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 99մ, հասնում բարձունքի վրա գտնվող թիվ 17 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, անցնում 186մ, հասնում է թիվ 18 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 283մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 20 սահմանակետով անցնում 331մ, հասնում թիվ 21 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 138մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող, թիվ 22 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, թիվ 23-26 սահմանակետերով անցնում 397մ հասնում է թիվ 27 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 84մ, հասնում է դաշտային

ճանապարհի եզրին գտնվող Վերին Կարմիր աղբյուր, Մոսեսգեղ և Նորաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4056 մ է:

ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐ ԱՂԲՅՈՒՐ – ՆՈՐԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԿԵՏԸ՝ «Գ»-«Դ»

Վերին Կարմիր աղբյուր, Մոսեսգեղ և Նորաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 129մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 2-5 սահմանակետերով անցնում 624մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 7-8 սահմանակետերով անցնում 457մ, հասնում թիվ 9 սահմանակետին, որտեղ հատվում է դաշտային ճանապարհի հետ, նորից թեքվում դեպի հարավ-արևմուտք, անցնում 223մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 11-18 սահմանակետերով անցնում 708մ, հասնում է թիվ 19 սահմանակետին, որտեղից թեքվում դեպի հարավ-արևելք, Նորաշեն համայնքի բնակավայրի եզրով, թիվ 20-29 սահմանակետերով անցնում 1182 մ, հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով, թիվ 31-36 սահմանակետերով անցնում 732մ, հասնում թիվ 37 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 38-42 սահմանակետերով անցնում 795մ, հասնում թիվ 43 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 44-47 սահմանակետերով անցնում 489մ, հասնում է թիվ 48 սահմանակետին: Թիվ 48 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 200մ, հասնում թիվ 49 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրով, թիվ 50-55 սահմանակետերով անցնում 1031մ, հասնում թիվ 56 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 111մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 57 սահմանակետին: Թիվ 57 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հարավ-արևելք ապա հարավ, ճանապարհի ոլորանների թիվ 58-74 սահմանակետերով անցնում 3062մ, հասնում ճանապարհի եզրի թիվ 75 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևմուտք, ճանապարհով անցնում 695մ, հասնում թիվ 76 սահմանակետին: Թիվ 76 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-

արևմուտք, լանջերով, հատելով ձորակներ, թիվ 77-82 սահմանակետերով անցնում 4467մ, հասնում թիվ 83 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջերով, թիվ 84-94 սահմանակետերով անցնում 1604մ, հասնում թիվ 95 սահմանակետին: Թիվ 95 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, լանջերով, թիվ 96 սահմանակետով անցնում 2527մ, հասնում Վերին Կարմիր աղբյուր, Նորաշեն և Արծվաբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 19037մ է:

ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐ ԱՂԲՅՈՒՐ - ԱՐԾՎԱԲԵՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Վերին Կարմիր աղբյուր, Արծվաբերդ և Նորաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ճանապարհի թիվ 1-4 սահմանակետերով անցնում 1075մ, հասնում է ճանապարհի ոլորանի թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, արևմուտք, հարավ և հարավ-արևմուտք, ճանապարհի ոլորապտույտների թիվ 6-22 սահմանակետերով անցնում 2435մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրի թիվ 23 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, դաշտային ճանապարհով՝ ձորին զուգահեռ, թիվ 24-30 սահմանակետերով անցնում 1796մ, հասնում է Թովուզ գետի ափին գտնվող թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, Թովուզ գետի թիվ 32-54 սահմանակետերով անցնում 3209 մ, հասնում է գետի ափին գտնվող Վերին Կարմիր աղբյուր, Արծվաբերդ և Նավուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8515մ է:

ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐ ԱՂԲՅՈՒՐ – ՆԱՎՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Գետի ափին գտնվող Վերին Կարմիր աղբյուր, Նավուր գյուղական և Բերդ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Թովուզ գետով՝ թիվ 1-81

սահմանակետերով անցնում 9525մ, հասնում գետի ափին գտնվող Վերին Կարմիր աղբյուր, Նավուր և Արծվաբերդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9525մ է:

ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐ ԱՂԲՅՈՒՐ - ԲԵՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ե»

Վերին Կարմիր աղբյուր, Տավուշ գյուղական և Բերդ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 324մ, հասնում է «Թավրալի յալ» եռանկյունաչափական կետի հետ համընկնող թիվ 2 սահմանակետին, ապա շարունակվում է նույն ուղղությամբ, թիվ 3-4 սահմանակետերով անցնում 379մ, հասնում է թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 127մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող, թիվ 6 սահմանակետին, որտեղից դաշտային ճանապարհով թեքվում է հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհ, թիվ 7-21 սահմանակետերով անցնում 1628մ, հասնում է թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, հատում ճանապարհները և թիվ 23-29 սահմանակետերով անցնելով 1113մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում դաշտային ճանապարհ, թիվ 31-39 սահմանակետերով անցնում 1329մ, հասնում է թիվ 40 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հարավ-արևելք, հարավ, ապա հյուսիս-արևմուտք, ճանապարհի ոլորանների թիվ 41-77 սահմանակետով անցնում 6534մ, հասնում է Վերին Կարմիր աղբյուր, Տավուշ գյուղական և Բերդ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11434 մ է:

ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐ ԱՂԲՅՈՒՐ - ՏԱՎՈՒՇ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»

Բարձունքի վրա գտնվող Վերին Կարմիր աղբյուր, Տավուշ և Ներքին Կարմիր աղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում է ջրբաժանը, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 998մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է

հարավ-արևելք, թիվ 6 սահմանակետով անցնում 181մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է հարավ-արևելք, թիվ 8-10 սահմանակետերով անցնում 445մ, հասնում է թիվ 11 սահմանակետին, այնուհետև հատում է Ներքին Կարմիր աղբյուր գնացող միջհամայնքային ճանապարհը, անցնում 76մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, ապա դաշտային ճանապարհով շարունակվելով նույն ուղղությամբ, անցնում է 146մ, հասնում է առվի ափին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծն առվով թեքվում է դեպի հարավ, թիվ 14-16 սահմանակետերով անցնում 416մ, հասնում է թիվ 17 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 103մ, հասնում է Այգեպար գնացող միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 18 սահմանակետին, որտեղ հատում է ճանապարհը, թեքվում հարավ-արևելք, ապա արևելք, Տավուշի ջրամբարի կողքով և թիվ 19-20 սահմանակետերով անցնում 251մ, հասնում է թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 352մ, հասնում է թիվ 22 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 23-25 սահմանակետերով անցնում 663մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 26 սահմանակետին, որտեղից ճանապարհով թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 133մ, հասնում է թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 374մ, հասնում է Վերին Կարմիր աղբյուր, Տավուշ գյուղական և Բերդ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4139մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՏԱՎՈՒՇ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Տավուշ գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ներքին Կարմիր աղբյուր գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Վերին Կարմիր աղբյուր գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Բերդ քաղաքային և «Դ»-«Ե» հատվածով՝ Զինչին գյուղական համայնքներին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Ծաղկավան (Տաուշի շրջան) և «Զ»-«Ա» հատվածով՝ Վարազավան գյուղական համայնքներին:

ՏԱՎՈՒՇ – ՆԵՐՔԻՆ ԿԱՐՄԻՐ ԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

Տավուշ, Ներքին Կարմիր աղբյուր և Վարազավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք թիվ 1-2 սահմանակետով անցնում 1126մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևելք հատում անտարը, թիվ 4 սահմանակետով անցնում 378 մ, հասնում բացառի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք անցնում 301 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք անտարի եզրագծով թիվ 7-11 սահմանակետերով անցնում 1298 մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, այնուհետև կտրուկ թեքվում հյուսիս-արևելք անցնում 242 մ, հասնում է բնական աղբյուրի մոտ գտնվող թիվ 13 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք թիվ 14 սահմանակետով անցնում 389 մ, հասնում է թիվ 15 սահմանակետին, այստեղից թեքվում է հարավ-արևմուտք ապա հարավ-արևելք թիվ 16-18 սահմանակետերով անցնում 713 մ հասնում է բարձունքի վրա գտնվող թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, լանջով, հատում դաշտային ճանապարհը թիվ 20-23 սահմանակետերով անցնում 1404 մ, հասնում է բարձունքի վրա գտնվող Տավուշ, Ներքին Կարմիր աղբյուր և Վերին Կարմիր աղբյուր, գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5852մ է:

ՏԱՎՈՒՇ – ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐ ԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Բարձունքի վրա գտնվող Տավուշ, Վերին Կարմիր աղբյուր և Ներքին Կարմիր աղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում է ջրբաժանը, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 998մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 6 սահմանակետով անցնում 181մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է հարավ-արևելք, թիվ 8-10 սահմանակետերով անցնում 445մ, հասնում է թիվ 11 սահմանակետին, այնուհետև հատում է Ներքին Կարմիր աղբյուր գնացող միջհամայնքային ճանապարհը, անցնում 76մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, ապա դաշտային ճանապարհով շարունակվելով նույն ուղղությամբ, անցնում է 146մ, հասնում է առվի ափին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծն առվով թեքվում է դեպի հարավ, թիվ 14-16 սահմանակետերով անցնում 416մ, հասնում է թիվ 17 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 103մ, հասնում է Այգեպար գնացող միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 18 սահմանակետին, որտեղ հատում է ճանապարհը, թեքվում հարավ-արևելք, ապա արևելք, Տավուշի ջրամբարի կողքով և թիվ 19-20 սահմանակետերով անցնում 251մ, հասնում է թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 352մ, հասնում է թիվ 22 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 23-25 սահմանակետերով անցնում 663մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 26 սահմանակետին, որտեղից ճանապարհով թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 133մ, հասնում է թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը կրկին թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 374մ, հասնում է Տավուշ, Վերին Կարմիր աղբյուր գյուղական և Բերդ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4139մ է:

ՏԱՎՈՒՇ – ԲԵՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Տավուշ, Զինչին գյուղական և Բերդ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք,

հատում Բերդ տանող ճանապարհը, առվով, հոսանքի ուղղությամբ անցնում 2690մ, հասնում է առվի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 2 սահմանակետով անցնում 881մ, հասնում է ջրբաժանի վրա գտնվող թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 4-6 սահմանակետերով անցնում 491մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, ապա շարունակվում է նույն ուղղությամբ, անցնում 223մ, հասնում է Տավուշ, Վերին Կարմիր աղբյուր գյուղական և Բերդ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4285մ է:

ՏԱՎՈՒՇ – ԶԻՆԶԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»

Տավուշ, Զինչին և Ծաղկավան (Տաուշի շրջան) գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Հախում գետի ափին, սահմանագիծը Հախում գետի վտակով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, վտակի ուղղաններով անցնում 2368 մ, հասնում անտառի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի արևելք, հետո հյուսիս, անտառի եզրագծի թիվ 2-3 սահմանակետերով անցնում 481 մ, հասնում անտառի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 5-6 սահմանակետերով անցնում 871 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս, անցնում 173 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անտառի եզրագծի թիվ 9 սահմանակետով անցնում 235 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անտառի եզրով անցնում 211 մ, հասնում անտառեզրի թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով դաշտային ճանապարհը, լանջի թիվ 12-13 սահմանակետերով անցնում է 553 մ, հասնում թիվ 14 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևելք, անցնում 237 մ, հասնում բարձունքի վրա գտնվող թիվ 15 սահմանակետին, այնուհետև կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 16 սահմանակետով անցնում 415 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է դեպի հարավ-արևելք, թիվ 18-22 սահմանակետերով անցնելով 475 մ, հասնում է ծորակի եզրին գտնվող թիվ 23 սահմանակետին, այստեղից թեքվում է հարավ-արևմուտք ապա հարավ-արևելք, ծորակով հոսող առվի ուղղանների թիվ

24-49 սահմանակետերով անցնում է 1653 մ, հասնում առվի եզրին գտնվող Տավուշ, Չինչին գյուղական և Բերդ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7373 մ է:

ՏԱՎՈՒՇ – ԾԱՂԿԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»

Դաշտային ճանապարհի եզրին գտնվող Տավուշ, Ծաղկավան (Տաուշի շրջան) և Վարազավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրագծով, հատելով դաշտային ճանապարհները, բարձունքները և անտառի բացատները, թիվ 1-7 սահմանակետերով անցնում է 2201 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի արևմուտք, անցնում 96 մ, հասնում առվակի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, առվակի թիվ 10-13 սահմանակետերով անցնում 482 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին, ապա կրկին թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 15 սահմանակետով անցնում 524 մ, հասնում առվի և դաշտային ճանապարհի հատման կետում գտնվող թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, անցնում 361 մ, հասնում թիվ 17 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում առվակը, թիվ 18-19 սահմանակետերով նցնելով 1306 մ, հասնում է թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անտառի եզրով, հատելով դաշտային ճանապարհները, թիվ 21-22 սահմանակետերով անցնում է 1040 մ, հասնում թիվ 23 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում ձորը, անցնում 323 մ, հասնում Հախում գետի ափին գտնվող թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հարավ, ապա հարավ-արևմուտք, գետի թիվ 25-28 սահմանակետերով անցնում 675 մ, հասնում Հախում գետի եզրին գտնվող Տավուշ, Ծաղկավան (Տաուշի շրջան) և Չինչին գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե» - «Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7007 մ է:

ՏԱՎՈՒՇ – ՎԱՐԱԳԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ա»

Տավուշ, Ներքին Կարմիր աղբյուր և Վարագավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անտառի եզրով անտառի եզրով անցնում 1030մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող Տավուշ, Վարագավան և Ծաղկավան (Տաուշի շրջան) գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1030 մ է: